

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՔՅԱՆ ԱՍՏԴԻԿ ՀՄԱՅՆԱԿԻ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 1921-1945 ԹԹ.

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր**

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Վիրաբյան Ա. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ստեփանյան Գ. Ս.**

պատմական գիտությունների թեկնածու
Առաքելյան Գ. Խ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. ապրիլի 19-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. մարտի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Որևէ երկրի պատմություն չի կարող ամբողջական լինել, եթե ուսումնասիրված չէ կամ թերի է լուսաբանված պատմական ճակատագրի բերումով այդ երկրից դուրս կազմավորված համայնքների պատմությունը:

Մեր խնդրո առարկան իրանահայ համայնքն է, որը Մերձավոր և Միջին Արևելքի հնագույն, ավանդական ու ամենախոշոր համայնքներից է:

Մինչև 1935 թ. Իրանը՝ հայտնի էր Պարսկաստանն անունով, սակայն թեկնածուական ատենախոսության մեջ նպատակահարմար ենք գտել օգտագործել միայն «Իրան» եզրույթը՝ աշխատանքի կառուցվածքը կուտ պահելու նկատառումներից ելնելով:

Իրանահայ համայնքի բացառիկությունը հիմնավորելիս պետք է փաստել, որ Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հայ համայնքները հիմնականում ձևավորվել կամ վերակազմավորվել են նոր և նորագույն ժամանակներում, հատկապես հայոց ցեղասպանությունից և Արևմտյան Հայաստանի հայաթափումից հետո, իսկ Իրանի հայ համայնքը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից՝ աչքի ընկնելով որպես կատարելապես ձևավորված ու հաստատուն մի համայնք: Ուստի անվարան կարելի է ասել, որ այն իրավունք ունի կոչվելու սիյուռքահայ ամենահին համայնքներից մեկը:

Համայնքի բացառիկության այլ դրսևորումներ վկայակոչելիս հարկ է անդրադառնալ հետևյալ իրողություններին. համայնքի գործածական լեզուն արևելահայերենն է: Իրանահայ համայնքի բնակչության հոգեկերտվածքը, աշխարհայացքը և մտածելակերպի շատ առանձնահատկություններ ճիշտ և ճիշտ նման են արևելահայության նույնատիպ հատկանիշներին: Երկար դարեր ապրելով բուն հայրենիքի սահմաններից դուրս՝ իրանահայերը եղել են հայ լեզվի, մշակույթի և հարուստ ավանդույթների կրողներն ու հարստացնողները:

Իրանահայ համայնքի կենսունակության գրավականն օտար երկրում ուծացման վտանգի դեմ մշտապես պայքար մղելն էր: Ազգային ինքնագիտակցության ոգին ու հայապահպանության գաղափարը վահան դարձնելով իր ինքնությունը խարխիղ երևույթների դեմ՝ իրանահայությունը միաժամանակ հանդես է բերել ճկունություն և, որպես Իրանի քաղաքացի, միահյուսել է հայոց բազմադարյան և իրանական հարուստ մշակութային արժեքները՝ կերտելով յուրատիպ մշակույթ: Իրանահայերը նաև գործուն մասնակցություն են ունեցել Իրանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին՝ նպաստելով այդ բնագավառներում նոր

¹ Երկրի շահական կառավարությունը Պարսկաստանն անվանափոխեց Իրան՝ շեշտելու համար իրանցիների արիական ծագումը:

արժեքների ստեղծմանը: Անգնահատելի է համայնքի խաղացած դերը հայ-իրանական հարաբերությունների զարգացման և խորացման գործում:

Այս առումով՝ իրանահայ համայնքի պատմության ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ձեռք բերում՝ ունենալով գիտաճանաչողական նշանակություն և արդիական-քաղաքական հնչեղություն:

Ներկա քաղաքական իրադրության պայմաններում, երբ տարածաշրջանը կարևոր դերակատարում ունի հարափոփոխ իրադարձությունների հոլովույթում, Իրանի տարածքում կազմավորված հայ համայնքի պատմության ուսումնասիրությունը, պատմական տարբեր ժամանակաշրջաններում նրա՝ երկրի կյանքում խաղացած դերի վերաբերյալ հարցադրումներն ու դրանց վերլուծությունն առավել քան այժմեական են և հրատապ: Սույն ատենախոսությունը 1921-1945 թթ. իրանահայ համայնքի պատմության վերաբերյալ ամբողջական, հայ պատմագիտության տեսանկյունից ամփոփ ուսումնասիրություն ստեղծելու փորձ է, ուստի չափազանց կարևոր և արդիական նշանակություն ունի թե՛ պատմագիտական և թե՛ քաղաքական առումներով:

Իրանահայերի պատմության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն հայագիտական հետազոտությունների ամբողջացման, այլև հայության ներուժի ամբողջական բացահայտման ու համախմբման տեսանկյունից, ինչը ենթադրում է աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների (տվյալ դեպքում իրանահայության) պատմության ուսումնասիրություն: Դա էլ իր հերթին հավելյալ հրատապություն է հաղորդում խնդրին:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն ատենախոսությունը նպատակ է հետապնդում Հայաստանի ազգային արխիվում պահպանվող փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, մամուլի համապատասխան նյութերի, ժամանակակիցների հուշերի ու վկայությունների, ինչպես նաև հրապարակում եղած առանձին ուսումնասիրությունների հենքի վրա անաչառ, բազմակողմանի և ընդգրկուն ներկայացնել իրանահայ համայնքի՝ ընտրված ժամանակահատվածի վերաբերյալ հայ պատմագրության մեջ ամբողջական լուսաբանում չգտած հարցերն ու իրողությունները՝ առանձնակի ուշադրություն դարձելով հետևյալ հիմնախնդիրներին.

ա) համակողմանի քննության ենթարկել պատմական ճակատագրի բերումով հայերի՝ Իրանում հաստատվելու և այնտեղ նոր բնակավայրեր հիմնելու կամ գոյություն ունեցողները համալրելու գործընթացը,

բ) ներկայացնել նրանց տեղաբաշխումն Իրանում 1921-1945 թթ.,

գ) վեր հանել նշված ժամանակաշրջանում իրանահայերի գրավածության հստակ պատկերը, երկրի կյանքում նրանց ներգրավվածության աստիճանը,

դ) ցույց տալ իրանահայերի՝ սոցիալ-տնտեսական դրդապատճառներով պայմանավորված տեղաշարժերի հետևանքով փոփոխվող վիճակագրության դինամիկան,

ե) պատշաճ հետազոտության ենթարկել իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքը, թեմերի գործունեությունը և իրավական կարգավիճակի հիմնահարցը,

զ) հանգամանալից ուսումնասիրել իրանահայ մշակույթի բոլոր ճյուղերը՝ դպրոցները, գրականությունը, երաժշտությունը, թատրոնը, կինոն և գեղանկարչությունը՝ լուսաբանելով այդ բնագավառներում իրանահայոց կերտած մշակութային բարձրաժեշտ ժառանգությունը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները:

Ատենախոսությունն ընդգրկում է իրանահայ համայնքի 1921-1945 թթ. պատմաշրջանը, սակայն առանձին դեպքերում կատարվել են որոշակի շեղումներ՝ իրադարձություններն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով: Հետազոտության եզրային տարեթվերի ընտրությունն ամենևին պատահական չէ. համայնքի պատմության՝ մեր հետաքրքրությունը բովանդակող ժամանակաշրջանի մեկնարկը կապված է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հռչակումից հետո հայ բազմահազար բնակչության, այդ թվում՝ դաշնակցության հայտնի գործիչների Իրան ներգաղթի, հետևապես՝ համայնքի որոշ չափով ստվարացման հետ: Ատենախոսության ժամանակագրությունն ավարտվում է 1945 թ. իրադարձությունների լուսաբանմամբ և քննական վերլուծությամբ: Դա այն թվականն էր, երբ Իրանի շատ բնակավայրեր դեռ հայաշատ էին: Ատենախոսության ժամանակագրությունը 1946 թ. չհասցնելը պայմանավորված է այդ թվականին իրանահայերի հայրենադարձության իրողությամբ: Այդ նշանակալից երևույթի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր հայաթափվեցին:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Մեր առջև դրված խնդիրները լուծելիս օգտագործել ենք ինչպես ընդհանուր տրամաբանական (վերլուծություն, համադրում, ընդհանրացում, համանմանություն, ինդուկցիա, դեդուկցիա, մոդելավորում, համեմատություն), այնպես էլ մասնավոր՝ պատմագիտական սկզբունքներ, մեթոդներ՝ պատմականության, նկարագրության և այլն: Առաջնորդվել ենք փաստերն անաչառ ու համակողմանի հետազոտելու սկզբունքներով՝ նպատակ ունենալով հասնել առավելագույն ճշմարտացիության և հավաստիության: Եզրահանգումները կատարվել են միայն փաստական նյութի հիման վրա, որի զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Ատենախոսության գիտական նորույթը: Առաջին անգամ ներկայացվում է իրանահայ համայնքի՝ հայ պատմագրության մեջ ամբողջական լուսաբանում չգտած 1921-1945 թթ. պատմությունը՝ հանրակողմանի քննության ենթարկելով համայնքի կազմը, սոցիալ-տնտեսական դրությունը, իրանահայ թեմերը, իրավական կարգավիճակը, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության մեջ քննախոսվող առանցքային հարցերի վերլուծությունը և եզրահանգումները կարող են նպաստել հայ-իրանական հարաբերություններն առավել խորությամբ ըմբռնելուն, կիրառելի դառնալ 1921-1945 թթ. իրանահայ համայնքի կազմին, իրանահայերի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի հիմնախնդիրներին նվիրված դասախոսությունների ընթացքում, օգտագործվել բուհական «Հայոց պատմություն», «Հայ սփյուռքի պատմություն» դասընթացների դասավանդման ժամանակ:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանին հարակից երկրների պատմության և Հայոց պատմության ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի ութ հոդվածներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսությունը հիմնված է գլխավորապես արխիվային նյութերի վրա: Աղբյուրագիտական հենքն առաջին հերթին Հայաստանի ազգային արխիվում (հետայսու՝ ՀԱԱ) պահպանվող փաստաթղթերն են: Բազմաթիվ արժեքավոր փաստաթղթեր են հայտնաբերվել ՀԱԱ մի շարք ֆոնդերի գործերից²:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1 (Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե), ց. 5, գ. 22, 49, գ. 7, գ. 131, ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 3, գ. 517, ֆ. 113 (ՀՀ կառավարություն), ց. 3, գ. 31, 89, 153, 362, ֆ. 114 (ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ), ց. 2, գ. 88, 154, 162, ֆ. 178 (Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), ց. 1, գ. 1, 44, 47, 109, 274, 306, 426, ֆ. 275 (Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ), ց. 7, գ. 15, ֆ. 326 (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 1, գ. 8, 16, 23, 25, 31, 34, 39, 68, 91, 118, 138, ֆ. 409 (Էջմիածնի գերագույն հոգևոր խորհուրդ), ց. 1, գ. 721, 4079, 4120, 4152, 4153, 4183, 4197, 4199, 4200, 4290, 4321, 4345, ֆ. 424 (Դարբինյան Արտակ Հակոբի (1876-1950 թթ.)–հասարակական գործիչ, հրապարակախոս, հրատարակիչ), ց. 3, գ. 130, 133, 362, 422, 432, ֆ. 425 (Մկրտիչ Պոտուրյան (1881-1959 թթ.)–հայագետ, լրագրող), ց. 1, գ. 108, ֆ. 465 (Փաստաթղթերի հավաքածու՝ իրանահայ գաղթավայրերի վերաբերյալ), ց. 3, գ. 29, 1-ին մաս, ց. 4, գ. 1, ց. 7, գ. 1, 74, 80, 91, ֆ. 688 (Քաղաքացիական կռիվների և Հայրենական պատերազմի մասնակիցների անձնական ծագման փաստաթղթերի հավաքածու), ց. 5, գ. 2, ֆ. 709 (Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերություն (ԱՕԿՍ)), ց. 3, գ. 175, 288, ֆ. 1048 (Տեր-Մինասյան Ռուբեն Կարապետի (1882-1951 թթ.)–կուսակցական, քաղաքական և պետական գործիչ), ց. 1, գ. 64, 146,

Իրանում ՀՀԴ գործունեության կարևորագույն անցքերի մասին արժանահավատ ու ուշագրավ վավերագիր է «ՀՀԴ պատմության թանգարան-հիմնադրամի» ֆոնդում պահվող Ա. Ամուրյանի (Տեր-Օհանյան) «Կեանքի էջեր» վերտառությունը կրող ձեռագիր և ցայսօր չհրատարակված ծավալուն հուշագրությունը³:

Բազմակողմանի քննության են ենթարկվել սփյուռքահայ, ինչպես նաև Հայաստանում ու Ռուսաստանում լույս ընծայված տպագիր սկզբնաղբյուրները, որոնք լույս են սփռում ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրների վրա⁴:

Իրանահայ համայնքի պատմական անցյալի, նորագույն ժամանակաշրջանի հիմնախնդիրների, բնակչության տեղաբաշխման և քանակի վերաբերյալ տեղեկություններ են ամփոփված Ա. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն» երկհատորյակում, Ա. Ալպոյաճյանի «Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը» եռհատորյակում, Ն. Գորոյանցի «Պարսկաստանի հայերը. պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ.», Վ. Միքայելյանի խմբագրությամբ լույս ընծայված «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», Կ. Գևորգյանի «Ամէնուն տարեգիրքը 1958», Կ. Դալլաքյանի «Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ)», Մ. Մանուկյանի «Իրանահայ գաղթօջախի առօրյան», Հ. Մարտիրոսյանի «Հայերի տեղաբաշխումն Իրանում

297, 301, 305, 310, 311, ֆ. 1381 («Հայֆիլմ» կինոստուդիա), ց. 3, գ. 5, ֆ. 1456 (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության գործունեության վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու), ց. 2, գ. 22, ֆ. 1457 («Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության գործունեության վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու), ց. 1, գ. 211:

³ Տե՛ս Տեր-Օհանեան Ա. (Ա. Ամուրեան), «Կեանքի էջեր», Յուշերս (անտիպ) մանկութիւնից մինչև 1936, Թեհրան, 1978, հոկտեմբերի 16:

⁴ Տե՛ս «Պարսկահայ տարեցոյց», առաջին տարի, Թեհրան, «Փարոս», 1927, «Պարսկահայ տարեցոյց», երկրորդ տարի, Թեհրան, «Փարոս», 1929, «Պարսկահայ տարեցոյց», երրորդ տարի, Թեհրան, «Փարոս», 1930, ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնիթերցումներում (1920-ական թվականներ) (փաստաթղթերի ժողովածու), պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյանի խմբ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2016, Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատասխանատու խմբագիր և կազմող՝ պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, «Հայ էդիթ», 1999, Конституции государств Ближнего и Среднего Востока, Пер. под ред. Левин И. Д. (Сост.), Москва, Издательство Иностран. лит., 1956, Маршал Баграмян, Сборник документов и материалов, Составители А. О. Арутюнян и др., Ответственные редакторы Г. А. Аветисян и А. А. Фелекян, Ереван, Издательство “Гитутюн” НАН РА, 1997.

(ղեմոգրաֆիկ տվյալներ)», Ա. Մաքսապետյանի «Հայերը Գիլանի մէջ և Ռաշտի հայոց եկեղեցին» և Ե. Խաթանասյանի «Հայոց թիւը» ուսումնասիրություններում⁵:

Ընդհանրապես Իրանի և մասնավորապես երկրի տարածքում կազմավորված հայ համայնքի պատմության, տնտեսության և մշակույթի, իրավական դրության ուսումնասիրման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել պրոֆ. Վ. Բայբուրդյանը⁶: Հրապարակված փաստական նյութերը մեծարժեք տեղեկություններ են հաղորդում քննախոսվող ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

Իրանահայ համայնքի պատմությանը, մշակույթին, ինքնավարության մարմինների գործառույթներին և իրավական դրությանն անդրադարձել է նաև Հ. Մարտիրոսյանը⁷:

⁵ Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Կ. Ա. Երևան, Հայպետհրատ, 1964, նույնի՝ Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Կ. Բ. Երևան, «Հայաստան», 1967, Ալլոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը (սկիզբէն մինչեւ ԺԱ. դար Քրիստոսի), Գահիրէ, «Սահակ-Մեսրոպ», 1941, նույնի՝ Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, Կ. Բ. (Քրիստոսի ԺԱ. դարէն մինչեւ միջին դարու վախճանը), Գահիրէ, «Նոր Աստղ», 1955, նույնի՝ Պատմութիւն հայ գաղթականութեան. հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, Կ. Գ. Նոր դարու սկզբէն մինչեւ Ի. դարու սկիզբը, Գահիրէ, «Նոր Աստղ», 1961, Գորոյեանց Ն., Պարսկաստանի հայերը. պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենաիին ժամանակներէ մինչեւ 1898 թ., Թեհրան, «Մողերն», 1968, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), Կ. 2, խմբ.՝ Միքայելյան Վ., Երևան, «Գիտություն», 2003, Գեղոզեան Կ., Ամէնուն տարեգիրքը 1958, Ե տարի, Պէյրուֆ, «Մշակ», 1957, Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, «Զանգակ-97», 2004, Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Երևան, 2000, Մարտիրոսյան Հ., Հայերի տեղաբաշխումն Իրանում (ղեմոգրաֆիկ տվյալներ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Կ. IV. Իրան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 150-173, Մաքսապետեան Ա., Հայերը Գիլանի մէջ եւ Ռաշտի հայոց եկեղեցին, «Հայրենիք», Պոսթըն, 1940, փետրուար, թիւ 4 (208), էջ 108-122, Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Պոսթըն, հրատ. Եղեռնի 50-ամեակի կեդր. յանձնախումբի, 1965:

⁶ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանն այսօր (Տեղեկատու), Երևան, «Վահան», 1999, նույնի՝ Իրանի պատմություն, (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, «Զանգակ-97», 2005, նույնի՝ Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, «Լուսակն», 2013:

⁷ Տե՛ս Մարտիրոսյան Հ., Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրությունը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1969, թիվ 1 (44), էջ 171-181, նույնի՝ Իրանահայ գաղութի պատմությունից (նորագույն շրջան), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Կ. VIII. Իրան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.,

Իրանահայ թեմերի, նրանց պատկանող հայկական եկեղեցիների գտնվելու վայրի, հիմնադրման և ավերման թվականների վերաբերյալ փաստական հարուստ նյութեր բովանդակող մենագրություն է հեղինակել Լ. Մինասյանը⁸:

2012 թ. Էդ. Բաղդասարյանի կողմից լույս ընծայվեց «Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն» խորագիրը կրող բազմահատոր աշխատությունը, որի մեջ ամփոփված են նաև հեղինակի՝ տարբեր տարիներին իրանահայ համայնքի վերաբերյալ հրատարակված հոդվածները և գրքույկները: Տասը հատոր ընդգրկող հետազոտությունը, որը մանրագնին ուսումնասիրման ենք ենթարկել, սկսվում է հայ-իրանական ժողովուրդների ծագումնաբանությունից՝ հասնելով մեր օրերը: Բազմահատորյակը, հիմնված լինելով Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի, Մխիթարյանների մատենադարանի, Թեհրանի և Թավրիզի հայոց առաջնորդարանների արխիվային և տեղեկատվական նյութերի, կանադական, ամերիկյան և եվրոպական հազվագյուտ գրքերի հավաքածուների և այլ աղբյուրների վրա, նպաստել է մեզ հետաքրքրող որոշ հարցերի խորքային լուսաբանմանը: Սակայն ունենալով ժամանակագրական լայն ընդգրկում և նպատակ հետապնդելով դառնալ իրանահայության ամբողջական պատմության ուսումնասիրություն՝ հատորյակը մեր հետազոտության շրջանակը բովանդակող շատ իրադարձություններ և հիմնախնդիրներ ներկայացնում է հպանցիկ, երբեմն շարադրանքում բացակայում է օգտագործված սկզբնաղբյուրների համադրման և վերլուծության սկզբունքների կիրառումը⁹:

1975, էջ 193-288, նույնի՝ Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2007:

⁸ Տե՛ս Մինասեան Լ., Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Նոր Զուղա, Ս. Ամենափրկիչ վանքի տպ., 1983:

⁹ Տե՛ս Բաղդասարյան Էդ., Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 1. Հայ-իրանական ռազմաքաղաքական հարաբերությունները և իրանահայ գաղութների առաջացումն ու զարգացումը, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 2. Իրանահայ համայնքների հասարակական-տնտեսական պատմություն, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 3. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Ա, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 5. Իրանահայ գավառները, գիրք Ա, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 6. Իրանահայ գավառները, գիրք Բ, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 7. Իրանահայ մշակույթը, գիրք Ա, Թեհրան-Տրոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 8. Իրանահայ մշակույթը,

Հ. Փահլևանյանի «Իրանահայ համայնքը (1941-1979)» ուսումնասիրությունը նվիրված է իրանահայ համայնքի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի առանցքային հարցերի, հայ և իրանցի ժողովուրդների պատմական կապերի ու փոխհարաբերությունների, Իրանի ժողովրդական կուսակցության շարքերում հայ կոմունիստների գործունեության, համայնքի քաղաքաբնակ և գյուղաբնակ զանգվածների սոցիալ-տնտեսական դրության և ինքնավարական վիճակի լուսաբանմանը: Հեղինակը, հիմնական շեշտը դնելով 1941-1979 թթ. ընդգրկող ժամանակահատվածի վրա, լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում նաև համայնքի պատմական անցյալի կարևոր անցքերի վերաբերյալ՝ օգտագործելով բազմալեզու սկզբնաղբյուրներ¹⁰:

Թեիրանի և Իրանի՝ հայերով բնակեցված հիմնական գավառներից Չհարմհալի, Փերիայի, Ղարադաղի, Ղարաղանի և Քյամարայի վերաբերյալ պատմական և դաշտային ազգագրական հարուստ նյութեր բովանդակող աշխատություններ են հեղինակել Ավ. քահանա Եղգարյանը, Ա. Սարյանը, Լ. Մինասյանը, Հ. Հովսեփյանը, Վ. Ռաթնոսյանը, Վ. Մովսեսյանը և Էդ. Բաղդասարյանը¹¹:

Հայաստանի օգնության կոմիտեի իրանյան մասնաճյուղերին շատ հպանցիկ անդրադարձ է կատարել Ա. Վարդապետյանը «Հայաստանի օգնության կոմիտե (1921-1937)» գրքովկում¹²: Առաջին հայացքից կազմակերպության ամբողջական գործունեության շարադրանք հանդիսացող աշխատանքում շատ առանցքային հարցեր ու խնդիրներ լուսաբանված են խիստ մակերեսայնորեն: Խորհրդային գաղափարների տարփողումն ու

գիրք Բ, Թեիրան-Տորոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 9. Մենք եւ մեր աղբյուրները, Թեիրան-Տորոնտո-Երեւան, 2012, նույնի՝ Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 10. Գիրք Ավելյաց, Թեիրան-Տորոնտո-Երեւան, 2012:

¹⁰ Տե՛ս Փահլևանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 329:

¹¹ Տե՛ս Բաղդասարյան Էդ. (Էդ. Գերմանիկ), Թեիրանահայ գաղութի պատմություն, Թեիրան, 2002, Եղգարեան Ավ., Իրանի Չհարմհալ գաւառը, Թեիրան, «Անի», 1963, Սարեան Ա., Պատմութիւն Չարմահալ գաւառի, Թեիրան, «Նայիրի», 1980, Մինասեան Լ., Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս-Լիբանան, Կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ տպ., 1971, Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը, հ. 1. Ազգագրություն, Երևան, «Գիտություն», 2009, Ռաթնոսեան Վ., Մովսեսեան Վ., Ղարաղան. հայ ազգաբնակչութիւն, Թեիրան, «Հաշեմիւն», 2004, Բաղդասարյան Էդ. (Էդ. Գերմանիկ), Իրանի Քյամարա գավառի հայկական գաղթօջախի պատմություն, Թեիրան, 2002:

¹² Տե՛ս Վարդապետյան Ա., Հայաստանի օգնության կոմիտե (1921-1937), Երևան, «Հայաստան», 1966:

դաշնակցության դատափետումը շղարշում են կարևորագույն շատ հարցեր անաչառ ներկայացնելու հնարավորությունը:

Իրանի հայ քաղաքական կուսակցությունների ստեղծման, Հայաստանի օգնության կոմիտեի և Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «Սասունցի Դավիթ» տանկային շարայան կառուցման նպատակով կազմակերպված հանգանակությանը համայնքի ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկություններ կան նաև «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 6-րդ, 7-րդ, 8-րդ հատորներում և «Հայոց պատմության» 4-րդ հատորում¹³:

Շիա մահմեդականների մոտ Սեֆյան Իրանում լայն կիրառություն ունեցող և մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում ևս գործադրվող «Իմամ Ջաֆարի» օրենքի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել Հ. Փափազյանը, Մ. Կարապետյանը, Բ. Կոստիկյանը և Գ. Մկրտումյանը¹⁴:

Ատրպատականի թեմի երախտավոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի կյանքի և գործունեության մասին հոդվածներ են հրատարակվել «Էջմիածին» ամսագրում, իսկ 2006 թ. լույս է ընծայվել առանձին գրքույկ՝ Ս. Մելիք-Թանգյանի և Հ. Առաքելյանի հեղինակությամբ¹⁵:

Իրանահայ համայնքի մշակութային կյանքի տարբեր բնագավառներ լուսաբանելիս, բացի արխիվային նյութերից և մամուլի հաղորդումներից,

¹³ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1981, Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1967, Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1970, Հայոց պատմություն, հատոր հ. IV, գիրք առաջին, նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, «Հանգակ-97», 2010:

¹⁴ Տե՛ս Կարապետյան Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII-XVIII դարեր), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1988, թիվ 1 (120), էջ 219-221, Կոստիկյան Բ., Մկրտումյան Գ., Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Թալիբ խալիֆայի անունից հայերի հետ կնքված դաշնագրերը որպես պատմական փաստաթղթեր, «Բանբեր հայագիտության», Երևան, «Գիտություն», 2015, թիվ 3 (9), էջ 118-148, Փափազյան Հ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատ., 1956, թիվ 3, էջ 85-99:

¹⁵ Տե՛ս Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան, «Էջմիածին». պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Էջմիածին, 1948, Ե. տարի, հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 24-26, Սալբիյան Տ. Բաբկեն արքեղա, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան (Կյանքն ու գործունեությունը), «Էջմիածին». պաշտոնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպ., 2013, ԿԹ տարի, հունիս, էջ 96-99, Մելիք-Թանգյան Ս., Առաքելյան Հ., Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի փոթորկալից կյանքը, Երևան, «Ստամպա», 2006:

ուսումնասիրության ենք ենթարկել այդ ոլորտներին նվիրված հետազոտություններն ու հրատարակումները: Հեղինակներից յուրաքանչյուրն իր ընտրած հիմնահարցի վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ է հաղորդում և որոշակի լույս սփռում դպրոցական կյանքի ձևավորման, զարգացման փուլերի, իրանահայ մամուլի, ժամանակի նշանավոր գործիչների (գրողներ, նկարիչներ, երաժիշտներ) և նրանց թողած արժեքավոր ժառանգության վրա¹⁶:

Ատենախոսության ժամանակաշրջանը լավագույնս ըմբռնելու և համայնքի իրողություններին քաջատեղյակ լինելու գործին մեծապես նպաստել է տվյալ ժամանակաշրջանի և մերօրյա իրանահայ լայնածավալ մամուլի ուսումնասիրությունը:

Որոշ խնդիրների լուսաբանման հարցում տեղեկատվության աղբյուր են հանդիսացել Հայկական սովետական, «Հայ սփյուռք», «Քրիստոնյա Հայաստան» և Իրանահայոց հանրագիտարանները¹⁷:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը 192 էջ է:

Ներածություն մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են առաջարկված նպատակը և խնդիրները, ուսումնասիրության

¹⁶ Տե՛ս Մարտիրոսյան Հ., Իրանի հայկական դպրոցները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1966, հոկտեմբեր, թիվ 10 (281), էջ 65-76, Աղայեան Ա., Տէրտէրեան Բ., Հայ տպագրութիւնն Իրանում 1638-2011, Թեհրան, 2012, Մինասեան Լ., Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994, Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպ., 1994, Տօնոյեան Ա., Անդաստան իրանահայ բանաստեղծութեան, Պէյրութ, «Սեան», 1963, «Իրանահայ արդի գրողներ», առաջին գիրք, ինքնուրոյն ստեղծագործութիւններ, խմբագրական կազմ՝ Արմանտ, Ռ. Բէն, Դև, Խանենց Գ., Մարութեան Մ., Միրզաեան Զ., Թեհրան, «Մողերն», 1964, Երեմեան Ա., Երզահան Նիկոլ Գալանդէրեան (Նրա կեանքի եւ երաժշտական արուեստի հիմնական գծերը), Թէհրան, «Մողերն», 1947, Ղազարյան Մ., Իրանահայ արդի նկարչությունը, «Սովետական Հայաստան», Երևան, 1966, սեպտեմբեր, թիվ 9 (246), էջ 23-24, Մինասյան Լ., Իրանահայ արվեստագետներ, «Հուր», Թեհրան, «Նուրբախշ», 1972, մայիս, թիվ 11, էջ 85-91:

¹⁷ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1978, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Այվազյան Հ., Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Այվազյան Հ., Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, 2003, Իրանահայոց հանրագիտարան. անվանի իրանահայերի կենսագրականները, կազմող՝ Ժանետ Տիգրանուհի Լազարյան, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2012:

գիտական նորույթը, հստակեցված հետազոտության ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների և առկա գիտական գրականության վերլուծությունը:

Առենախոսության **առաջին գլուխը՝ «Իրանահայ համայնքի կազմը և սոցիալ-տնտեսական դրությունը 1921-1945 թթ.»**, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում, որը վերտառված է «**Իրանահայ համայնքի ժողովրդագրական տեղաշարժերը և հայերի տեղաբաշխումն Իրանում**», քննության ենք առել դիտարկվող ժամանակաշրջանում համայնքում կատարվող ժողովրդագրական տեղաշարժերը և անդրադարձել հայերի տեղաբաշխմանն Իրանի տարբեր բնակավայրերում:

Երկրորդ ենթագլխում՝ «Իրանահայերի սոցիալ-տնտեսական դրությունը», հանգամանալից ներկայացրել ենք իրանահայերի սոցիալ-տնտեսական դրությունը, վեր հանել Իրանի քաղաքներում և գյուղերում նրանց զբաղվածության հստակ նկարագիրը:

Առենախոսության **երկրորդ գլուխը**, որը վերնագրված է «**Իրանահայ համայնքի թեմերը, իրավական կարգավիճակը և հասարակական-քաղաքական կյանքը 1921-1945 թթ.**», բաժանված է երեք ենթագլուխների:

Առաջին ենթագլխում՝ «Իրանահայ համայնքի թեմերը և իրավական կարգավիճակը», լուսաբանել ենք իրանահայ երեք թեմերի գործունեությունը և վերլուծել համայնքի իրավական կարգավիճակի հիմնահարցն իր ամբողջության մեջ:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ հասարակական կազմակերպությունների գործունեությունն Իրանում և իրանահայ համայնքի կապերը Խորհրդային Հայաստանի հետ», ցույց ենք տվել իրանահայ հասարակական կազմակերպությունների՝ համայնքի կյանքում խաղացած մեծ դերը և Խորհրդային Հայաստանի հետ հաստատված կապերի արդյունավետ ընթացքը:

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական կուսակցությունների գործունեությունն Իրանում», անաչառ և համակողմանի քննության ենք ենթարկել 1921-1945 թթ. Իրանում գործող հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, Ռամկավար ազատական կուսակցության պատմությունը՝ վերլուծելով նրանց ծավալած գործունեությունն առանձին-առանձին: Անդրադարձել ենք նաև Իրանի ժողովրդական կուսակցությանը («Շեքեթ թուղեթ Իրան»), քանզի վերջինիս անդամակցել են շատ իրանահայեր, իսկ նրանցից ոմանք ակտիվ մասնակցություն են ունեցել հիմնադրման աշխատանքներին:

Երրորդ գլուխը՝ «Իրանահայ համայնքի մշակութային կյանքը 1921-1945 թթ.», ունի երեք ենթագլուխ:

Առաջին ենթագլխում՝ «Հայկական դպրոցներն Իրանում», հանգամանորեն ներկայացրել ենք իրանահայ համայնքի կրթական կյանքը՝ հայկական դպրոցների վերաբերյալ վիճակագրական առատ տվյալների ներբերմամբ, դրանց առջև ծառայած խնդիրների, իրանական կառավարության հրամանով հայկական դպրոցների փակման, այնուհետև վերաբացման իրողությունների լուսաբանմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Իրանահայ գրականությունը և մամուլը», վերլուծության ենք ենթարկել իրանահայ գրականության ձևավորման և զարգացման նախադրյալները, 1921-1945 թթ. համայնքում աշխույժ գրական գործունեությամբ հանդես եկած իրանահայ գրողների երկերը և առանձնակի ուշադրություն հատկացրել իրանահայ մամուլի ուսումնասիրմանը՝ կարևորելով վերջինիս տեղեկատվական գործառույթ իրականացնող դերը:

Երրորդ ենթագլխում՝ «Իրանահայ արվեստը. (երաժշտություն, թատրոն, կինո և գեղանկարչություն),» անդրադարձել ենք իրանահայ արվեստին՝ ներկայացնելով երաժշտության, թատրոնի, կինոյի և գեղանկարչության ասպարեզի կարկառուն դեմքերին և նրանց համաշխարհային հնչեղություն ձեռք բերած արժեքավոր աշխատանքները:

Եզրակացության մեջ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Իրանահայ համայնքի 1921-1945 թթ. պատմության հանրակողմանի ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությանը.

ա) Պատմական ճակատագրի բերումով հայերն հաստատվեցին Իրանում և կազմավորեցին ամուր համայնք: Իրանի տնտեսության մեջ տեղի ունեցող խոշոր փոփոխություններն իրենց ազդեցությունն էին թողնում ոչ միայն իրանահայերի զբաղվածության, բարեկեցության մակարդակի, այլև ժողովրդագրական տեղաշարժերի վրա: Մեծ ծավալներ էր ստանում հայերի հոսքը դեպի արդյունաբերական քաղաքներ: Ճիշտ է՝ տնտեսականից բացի նաև քաղաքական դրդապատճառներով պայմանավորված՝ համայնքի կազմում հաճախ կատարվում էին կառուցվածքային փոփոխություններ, բայց դրանք խիստ օրինաչափ էին և տրամաբանական:

բ) Մայրաքաղաքի բնակչության թվական աճի և այլ հանգամանքների հետևանքով պատմական, աշխարհագրական, թեմական և կազմակերպությունների ընդգրկումով երկու՝ հյուսիսային և հարավային տարածաշրջանների բաժանված իրանահայ համայնքում 1944 թ. ստեղծվեց հայաբնակ կենտրոնական նոր տարածաշրջան:

գ) Իրանահայերը, ձեռք բերելով համապատասխան մասնագիտություններ, աստիճանաբար ներգրավվեցին երկրի կյանքի բոլոր բնագավառներում:

դ) Իրանահայ համայնքն ունեցել է ներքին ինքնավարություն: Իրանի մեջլիսում հայերն ստացել էին երկու պատգամավոր ունենալու իրավունք:

իրանական իշխանությունների կողմից արտոնված լինելով ունենալ ազգային դպրոցներ, կազմակերպություններ և եկեղեցի՝ իրանահայերը շրջանցել են ծուլման վտանգը: Սակայն երկրի վարչակարգը երկար հավատարիմ չմնաց իր տված արտոնություններին. 1936 թ. իրանական իշխանությունները սկսեցին կենսագործել «երկրի իրանացման» քաղաքականություն:

ե) Իրանահայ հասարակական կազմակերպությունները մեծ ավանդ ունեցան համայնքի նյութական և հոգևոր բարեկեցության գործում: Անգամ հայկական դպրոցները փակ եղած ժամանակ այդ կազմակերպությունները մատաղ սերնդին գաղտնի ուսուցանում էին մայրենի լեզուն՝ չգրկելով նրանց հայերեն սովորելու և հայեցի դաստիարակություն ստանալու իրավունքից:

զ) Հայաստանում 1920 թ. Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ինչպես ողջ սփյուռքահայությունը, իրանահայ համայնքը ևս օգնություն ցուցաբերեց Հայաստանի երկրորդ հանրապետությանը: Թեհրանում, Թավրիզում, Ռաշտում, Էնզելիում, Քերմանշահում, Աիվազում, Նոր Ջուղայում, Ղազվինում, Նիշաբուրում, Մեշհեղում, Սաբզևարում և այլուր ստեղծված ՀՕԿ-ի մասնաճյուղերը նպաստեցին Խորհրդային Հայաստանի վերաշինման գործին: Մայր հայրենիքին համայնքի օժանդակությունը դրսևորվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին. իրանահայերը հանգանակություններ կատարեցին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղդասյան» տանկային շարասյուների ստեղծման նպատակով: Այս իրողությունները Խորհրդային Հայաստանի հետ իրանահայ համայնքի կապերի լավագույն վկայությունն են:

է) Իրանի հայ քաղաքական կուսակցությունների առաջադրած խնդիրներն ու նպատակները միտված էին իրանահայության հասարակական և մշակութային կյանքի զարգացմանը: Որոշ հարցերում ունենալով գաղափարական տարածայնություններ՝ հայ քաղաքական կուսակցություններն, այդուամենայնիվ, կարողացան նպաստել իրանահայերի կրթադաստիարակչական և բարոյահոգեբանական մակարդակի բարձրացմանը:

ը) Իրանահայ մշակույթը, լինելով հայոց բազմադարյան մշակույթի լավագույն արժեքների կրող, մայր հայրենիքից դուրս գտնվող հայության ազգային դիմագծի պահպանման գրավականը դարձավ:

թ) Մշակութային և հասարակական-քաղաքական գործունեության համար անբարենպաստ տարիներին հաջորդած վերելքի շրջանում ծավալվեցին առավել բեղուն աշխատանքներ: Վերաբացվեցին հայկական դպրոցները, ծավալվեցին դպրոցաշինության աշխատանքներ, հիմնվեցին հասարակական կազմակերպություններ, իսկ նախկինում գոյություն ունեցածները վերսկսեցին իրենց աշխատանքները, ակտիվ գործունեությամբ հանդես եկան քաղաքական կուսակցությունները:

ժ) Իրանահայերը, բացի համայնքի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում ծավալած ակտիվ գործունեությունից,

մեծապես նպաստեցին Իրանի համապատասխան բնագավառների զարգացմանը և նոր երևույթների ու արժեքների հանդես գալուն:

Իրանում կային հայ առևտրական տներ, որոնց ներկայացուցիչներն ակտիվ դերակատարում ունեին երկրի առևտրատնտեսական հարաբերություններում: Նրանք, օգտագործելով արտերկրում կուտակած իրենց փորձն ու հմտությունները, հանդես էին գալիս նոր նախաձեռնություններով և ծրագրերով: Հայերին վստահում էին պետական բարձր պաշտոններ: Իրանի արտաքին գործերի նախարարության կարևոր պաշտոնյաներից էր Հովհաննես խան Մասեհյանը: Արտաքին գործերի նախարարությունում նա վարել է բազմաթիվ պատասխանատու պաշտոններ: Նա նաև բարձրակարգ թարգմանիչ էր:

Այս բոլոր իրողությունների ուսումնասիրությունն ու քննական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայապահպանությունն իրանահայ համայնքում վտանգված չէ: Սակայն ապագայի մարտահրավերները կարող են լուրջ խթան հանդիսանալ իրանահայերի՝ այլ երկրներ արտագաղթելու հարցում՝ սպառնալիք դառնալով հայ համայնքի գոյությանը:

Առենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) պարսկաստանյան ճյուղերի առաջին քայլերը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 269-278:
2. Իրանահայերի սոցիալ-տնտեսական դրությունը 1921-1945 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, N 122, Երևան, «Հայկարի» ՍՊԸ տպ., 2014, էջ 413-430:
3. Հայկական դպրոցներն Իրանում 1921-1945 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, N 123, Երևան, «Հայկարի» ՍՊԸ տպ., 2015, էջ 291-304:
4. Իրանահայ համայնքի ինքնավարության մարմինները և իրավական կարգավիճակը 1921-1945 թթ., «Հայագիտության հարցեր» հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, թիվ 1 (7), էջ 68-81:
5. Իրանահայ համայնքի ժողովրդագրական տեղաշարժերը 1920-1945 թթ., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, «Գիտություն», 2016, թիվ 3 (203), էջ 58-67:
6. Հայրենասիրության գաղափարական շեշտադրումն իրանահայ երաժշտության մեջ (1921-1945 թթ.), «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, «Տիր», 2017, թիվ 3, էջ 254-261:
7. Հայկական կուսակցությունների գործունեությունն Իրանում 1921-1945 թթ., «Հայագիտության հարցեր» հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, թիվ 2 (14), էջ 75-87:
8. Իրանահայ համայնքը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, N 126, Երևան, «Հայկարի» ՍՊԸ տպ., 2018, էջ 293-299:

АКОПЯН АСТХИК АМАЯКОВНА

ИРАНСКАЯ АРМЯНСКАЯ ОБЩИНА В 1921-1945 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 19-го апреля 2019 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию истории иранской армянской общины 1921-1945 годов, не нашедшей своего полного освещения в армянской историографии. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении обоснована актуальность темы, представлены цели и задачи диссертации, научная новизна исследований, хронологические рамки, анализ первоисточников и существующей научной литературы, относящихся к проблеме.

Первая глава диссертации: **“Состав иранской армянской общины и социально-экономическое положение 1921-1945 гг.”**, состоит из двух параграфов. В первой главе мы исследовали демографические сдвиги в иранской армянской общине за изучаемый период, а также рассмотрели размещение армян в различных поселениях Ирана. Обстоятельно представили социально-экономическое положение иранских армян и дали четкое описание их занятости в городах и селах Ирана.

Вторая глава диссертации: **“Епархии иранской армянской общины, правовой статус и общественно-политическая жизнь в 1921-1945 гг.”** состоит из трех параграфов. В данной главе мы осветили деятельность трех иранских армянских епархий и проанализировали вопрос о правовом статусе общины в целом. Здесь мы показали большую роль иранских армянских общественных организаций в жизни общины и эффективность процесса установленных отношений с Советской Арменией. Провели объективное и всестороннее исследование истории действующих в 1921-1945 гг. в Иране армянских политических партий (Армянский революционный Дашнакцутюн, Социал-демократическая партия “Гнчак”, Либеральная партия Рамкавар), отдельно анализируя деятельность каждого из них, а также представили Народную партию Ирана (“Хезбе Тудее Иран”), членами которой являлись многие иранские армяне, а некоторые из них даже принимали активное участие в ее основании.

Третья глава: “Культурная жизнь Иранской армянской общины 1921-1945гг.”, имеет три параграфа. В данной главе мы обстоятельно представили образовательную жизнь иранской армянской общины, статистические сведения об армянских школах, поставленные перед ними задачи и освещение фактов закрытия, затем вновь открытия армянских школ по приказу иранского правительства. Проанализировали предпосылки формирования и развития иранской армянской литературы, произведения иранских армянских писателей, которые в 1921-1945 гг. занимались активной литературной деятельностью в общине; уделили особое внимание изучению иранской армянской прессы, подчеркивая особую роль последней в осуществлении информационных функций. Мы также рассмотрели иранское армянское искусство, представляя выдающихся деятелей в области музыки, театра, кино и живописи, а также их ценные произведения искусства, имеющие мировую известность.

В заключении обобщены основные итоги диссертации и выводы.

HAKOBYAN ASTGHIK H.

THE IRANIAN-ARMENIAN COMMUNITY IN 1921-1945

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on April 19, 2019, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The dissertation is dedicated to the study of the history of the Iranian-Armenian community from 1921 to 1945 that has not been completely examined in the Armenian historiography. The dissertation consists of an introduction, three chapters, conclusion and a list of the literature and the sources used.

The introduction presents the timeliness of the theme, the purpose and the objectives of the dissertation, the scientific originality of the study, the time framework of the research, the examination of the existing literature and the sources referring to the issue.

The first chapter of the dissertation titled "**The Structure and the Socio-Economic Situation of the Iranian-Armenian Community from 1921 to 1945**" consists of two sub-chapters. In the first chapter the demographic movements of the Iranian-Armenian community in the settled framework of the time and the distribution of the Armenians in different settlements of Iran are examined. The socio-economic situation of the Iranian-Armenians is comprehensively presented, a clear description of their employment in the cities and villages of Iran is presented.

The second chapter of the dissertation entitled "**The Dioceses of the Iranian-Armenian Community, the Legal Status and the Public- Political Life of the Community from 1921 to 1945**" is divided into three sub-chapters. In the second chapter the activity of the three dioceses of the Iranian-Armenian community is elucidated and the issue of the legal status of the community is analyzed thoroughly. The role of the Iranian-Armenian non-governmental organizations in the life of the community and the effective process of the established relationships with Soviet Armenia are depicted.

We have objectively and comprehensively studied the history of the Armenian political parties - the Armenian Revolutionary Federation, Social Democrat Hunchakian Party and Armenian Democratic Liberal party - acting in Iran from 1921 to 1945 and analyzed their activities separately. We have reflected upon the Hezbe Tudeh Iran (Masses Party of Iran) since many Armenians became members of the party and some had active participation in its foundation.

The third chapter titled "**The Cultural Life of the Iranian-Armenian Community from 1921 to 1945**" has three sub-chapters. In the third chapter we comprehensively presented the educational life of the Iranian-Armenian community with abundant statistical data on Armenian schools, the problems they encountered with, the closure of the Armenian schools by the order of the Iranian government, and then the processes of their reopening. We have studied the preconditions for the formation and development of the Iranian-Armenian literature, the works of the Iranian-Armenian writers who demonstrated vigorous activities from 1921 to 1945 and we paid meticulous attention to the study of the Iranian-Armenian press considering its informative function very significant. We have reflected upon the Iranian-Armenian art by presenting the famous representatives of music, theatre, film art and painting and their valuable works that gained a worldwide fame.

The main results and conclusions of the dissertation are summarized in **the conclusion**.